'ի կարգս ամուսնութեան և մկրտել 'ի Քրիստոս զորդիս մեր ըստ Օրինաց հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ։ Նոյն գունակ ես Եղիսաբեթ մուղնու և դուստր Տեառն Եղիազարի ընդունեցի դաշինս և զամենայն զոր ինչ 'ի վեր գրեցեալ, և ուխտ եդի որ ամուսնանամ ընդ պարոն Աբրահամ կարփու որդոյ ադամի և 'ի ժամանակի բոլոր կենաց իմոց կալով մեամ հնազանդ Օրինացն հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ և հաւատարիմ առն իմոյ։

'Ի վերայ այս ուխտադրութեան դաշինս տոկոսի ընդունեցաք և յանձն առաք 'ի վերայ մեր որ զոր ինչ 'ի վերոյ ուխտադրութեան ով որ 'ի մէնջ պակասեսցի և 'ի կատար հասուցանելն խնայեսցի՝ պարտաւոր լինի հատուցանել հինգ հազար դահեկան երծաթ 'ի տունն ողորմութեան հայոց։

Այսպէս կատարեցաւ դաշինս ուխտադրութեան մերոյ կամաւ և յօժարութեան մերոյ և ընդունելութեամբ ծնօղաց և ազգականաց մերոց 'ի վերայ այս ցանկալի խորհրդեանս միաբան յուսանալով 'ի Տէր սպասիմք զի մեզ արժանի արասցէ և սրբութեամբ հասուցէ կէտ ժամանակին Սուրբ ամուսնութեան զի կարօղ լինիցիմք ընդունիլ Օրհնութիւն 'ի Տեառնէ արարչէն մերմէ ձեռամբն քահանայի Սուրբ Եկեղեցւոյն հայոց աճելոյ բազմանալոյ վասն պաշտման Տեառն արարչին մերոյ և Օգնական բարձրագահ և բարե-